Ֆրանկոֆոնիայի ընտրական առաքելության նախնական հայտարարությունը 2026 թվականի հունիսի 7-ին Հայաստանում անցկացված Ազգային ժողովի ընտրությունների վերաբերյալ

Ֆրանկոֆոն տարածքում ընտրական գործընթացների ուղեկցման շրջանակներում և Հայաստանի Հանրապետության իշխանությունների հրավերով՝ Ֆրանկոֆոնիայի գլխավոր քարտուղար տիկին Լուիզ Մուշիկիվաբոն գործուղել է Ֆրանկոֆոնիայի ընտրական առաքելություն (MEF)՝ Հայաստանում անցկացված խորհրդարանական ընտրությունների կապակցությամբ:

Ընտրություններից առաջ Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությունը (OIF) աջակցություն է ցուցաբերել ընտրությունների վերահսկողությամբ զբաղվող պետական հաստատություններին և քաղաքացիական հասարակության կազմակերպություններին՝ նպատակ ունենալով ամրապնդել մեդիայի կարգավորումը, պայքարը ապատեղեկատվության դեմ, ընտրողների իրազեկումը և ընտրական գործընթացի թափանցիկությունը:

Ընտրությունների կառավարման մարմինների, քաղաքական ուժերի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ անցկացված հանդիպումների, ինչպես նաև առաքելության անդամների կողմից իրականացրած վերլուծության և դիտարկումների հիման վրա, MEF-ը գնահատում է, որ խորհրդարանական ընտրություններն անցկացվել են խաղաղ, կարգապահ մթնոլորտում և գործող օրենսդրությանը համապատասխան:

Առաքելությունը կոչ է անում հայկական կողմերին ընտրական վեճերի դեպքում դիմել օրենքով սահմանված ընթացակարգերին և ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ ընտրական համակարգի ամրապնդման, ժողովրդավարության և խաղաղության հետագա զարգացման նպատակով:

Հայաստանի Հանրապետության նախագահ, Նորին Գերազանցություն Վահագն Խաչատուրյանի հրավերով՝ Ֆրանկոֆոնիայի գլխավոր քարտուղար տիկին Լուիզ Մուշիկիվաբոն գործուղել է Ֆրանկոֆոնիայի ընտրական առաքելություն (MEF)՝ 2026 թվականի հունիսի 7-ին կայացած Ազգային ժողովի ընտրություններին հետևելու նպատակով:

Առաքելությունը ղեկավարել է Բելգիայի պատգամավոր, նախկին նախարար և Վալոնիա–Բրյուսել Ֆեդերացիայի խորհրդարանի նախագահ պարոն Ֆիլիպ Կուրարը: Պատվիրակության կազմում ընդգրկված էին ֆրանկոֆոն երկրների մի շարք հեղինակավոր անձինք և փորձագետներ, մասնավորապես՝

- տիկին Ամինատա Լի-Նդիայեն՝ Սենեգալի Սահմանադրական խորհրդի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար,
- պարոն Բենուա Բուրկը՝ Նյու Բրանսուիքի պատգամավոր և Ֆրանկոֆոնիայի խորհրդարանական վեհաժողովի (APF) ներկայացուցիչ,
- տիկին Անետա Գոնցան՝ Մոլդովայի Տեսալսողական խորհրդի փոխնախագահ:

Առաքելությունը Երևանում գտնվել է հունիսի 1-ից 9-ը և հանդիպումներ է ունեցել կառավարության անդամների, ընտրական մարմինների, քաղաքական ուժերի, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, լրատվամիջոցների, Հայաստանում հավատարմագրված ֆրանկոֆոն երկրների դիվանագիտական

ներկայացուցչությունների, ինչպես նաև ազգային և միջազգային դիտորդական առաքելությունների ներկայացուցիչների հետ:

Իր մանդատին համապատասխան՝ MEF-ը գնահատել է խորհրդարանական ընտրությունների նախապատրաստման և անցկացման պայմանները՝ հատկապես 2000 թվականի նոյեմբերի 3-ի Բամակոյի հռչակագրում ամրագրված ազատ, վստահելի և թափանցիկ ընտրությունների սկզբունքների լույսի ներքո:

Քվեարկության օրը MEF-ի անդամներն այցելել են ընտրատեղամասեր Երևանում, ինչպես նաև Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում:

Իրականացված հանդիպումների և վերլուծությունների հիման վրա առաքելությունը ներկայացնում է հետևյալ ընդհանուր նախնական եզրակացությունները.

- խորհրդարանական ընտրությունների կազմակերպչական և նյութատեխնիկական ապահովման բարձր մակարդակ և ընտրական վարչարարության արդյունավետ աշխատանք,
- քաղաքական ուժերի և դերակատարների միջև թափանցիկության և հավասարության ամրապնդմանն ուղղված բարեփոխումների իրականացում,
- նախընտրական քարոզարշավը բնութագրվել է ատելության խոսքի աճով, ինչը, զուգորդվելով մեդիայի բևեռացման հետ, հանգեցրել է քաղաքական բանավեճի որակի վատթարացման,
- քարոզարշավը վրա ազդել են նաև թվային հարձակումները, սոցիալական ցանցերում ապատեղեկատվության ակտիվ տարածումը և որոշ քաղաքական ուժերի կողմից կեղծ տեղեկատվության տարածումը,
- ընտրական գործընթացը ուղեկցվել է տարբեր բնույթի արտաքին քաղաքական և ֆինանսական միջամտությունների վերաբերյալ պնդումներով:

Քվեարկության օրը առաքելությունը արձանագրել է հետևյալը.

- քվեարկությունն ընդհանուր առմամբ անցկացվել է հանգիստ մթնոլորտում և ընտրական օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերի պահպանմամբ,
- այցելված ընտրատեղամասերը բացվել և փակվել են օրենքով սահմանված ժամերին,
- ընտրատեղամասերի ցուցանակներն ու ուղղորդումները հստակ էին,
- ընտրատեղամասերը համալրված էին անհրաժեշտ ընտրական նյութերով և լավ կազմակերպված էին,
- սահմանափակ շարժունակություն ունեցող ընտրողների համար նախատեսված էր շարժական քվեատուփի համակարգ,
- տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները ցուցաբերել են ընթացակարգերի լավ իմացություն և ապահովել քվեարկության մասնագիտական կազմակերպումը,
- այցելված ընտրատեղամասերի մեծ մասում ներկա էին թեկնածուների ներկայացուցիչներ և ազգային ու միջազգային դիտորդներ,
- քվեարկության ավարտը և ձայների հաշվարկն իրականացվել են գործող իրավական ընթացակարգերին համաձայն,
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պարբերական հաղորդակցությունը և մասնակցության տվյալների հրապարակումը նպաստել են ընտրական գործընթացի թափանցիկությանը,
- այցելված ընտրատեղամասերը սահմանափակ հասանելիություն էին ապահովում հաշմանդամություն ունեցող անձանց համար,
- MEF-ը արձանագրել է կանանց լավ ներկայացվածություն տեղամասային ընտրական հանձնաժողովներում և բարձր է գնահատում ընտրական անձնակազմի ներգրավվածությունն ու մասնագիտական աշխատանքը:

Վերոնշյալ դիտարկումների հիման վրա առաքելությունը ներկայացնում է հետևյալ

նախնական առաջարկությունները.

- շարունակել իրավական բարեփոխումները՝ քաղաքական ուժերի և դերակատարների միջև թափանցիկությունն ու հավասար պայմաններն առավել ամրապնդելու նպատակով,
- ուժեղացնել ատելության խոսքի և տեղեկատվական խաթարումների կանխարգելման ու դրանց դեմ պայքարի միջոցառումները, հատկապես ընտրական ժամանակաշրջաններում:

Առաքելությունը բարձր է գնահատում ընտրությունների կառավարման մարմինների նվիրվածությունն ու մասնագիտական աշխատանքը, ինչպես նաև հայ ընտրողների ակտիվ մասնակցությունը:

Մինչև ընտրությունների վերջնական արդյունքների հրապարակումը MEF-ը կոչ է անում քաղաքական դերակատարներին ընտրական վեճերի դեպքում նախապատվություն տալ օրենքով նախատեսված իրավական մեխանիզմներին:

Ընտրությունների ավարտից հետո MEF-ը կպատրաստի մանրամասն հաշվետվություն՝ ներառելով առաջարկություններ, որոնք կնպաստեն ընտրական իրավական շրջանակի և ընտրությունների կազմակերպման հետագա բարելավմանը, ինչպես նաև Հայաստանի ժողովրդավարության և իրավունքի գերակայության ամրապնդմանը:

Առաքելությունն արդեն իսկ վերահաստատում է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության պատրաստակամությունը՝ աջակցելու այդ առաջարկությունների իրականացմանը:

Վերջում MEF-ը խորին շնորհակալություն է հայտնում Հայաստանի պետական իշխանություններին, ընտրական գործընթացի բոլոր մասնակիցներին և, ընդհանուր առմամբ, հայ ժողովրդին՝ առաքելությանը ցուցաբերած ջերմ ընդունելության համար: